ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ

ՊԱԼԱՏ

Դասընթաց 3

Իրավագիտության հիմունքներ

Քննության հարցեր

Հունիս 2022թ.

Բաժին Ա

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1. Ձեռնարկատիրական է համարվում՝

ա/ անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց շահույթ ստանալն է,

բ/ անձի ինքնուրույն իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է,

գ/ անձի՝ իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է,

դ/ անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

2. Քաղաքացիական օրենսդրության սկզբունք է՝

ա/ ինքնապաշտպանությունը.

բ/ ըստ մեղքի պատասխանատվությունը.

գ/ խախտված իրավունքների վերականգնման ապահովումը.

դ/ տնտեսվարությունը.

3. Խնամակալություն սահմանվում է՝

ա/ տասնչորս տարին չլրացած անչափահասների, ինչպես նաև հոգեկան խանգարման հետևանքով դատարանով անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ,

բ/ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ,

գ/ տասնչորս տարին չլրացած անչափահասների, ինչպես նաև մինչև տասնութ տարեկան անչափահասների նկատմամբ,

դ/ հոգեկան խանգարման հետևանքով դատարանով անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ:

4. Իրավաբանական անձ է համարվում՝

ա/ այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող,

բ/ այն կազմակերպությունը, որն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող,

գ/ այն հիմնարկը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող,
դ/ այն առևտրային կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Տնտեսական ընկերությունը համարվում է դուստր՝
ա/ եթե այլ (հիմնական) տնտեսական ընկերակցություն նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան՝ հնարավորություն ունի կանխորոշել նման ընկերության որոշումները:
բ/ եթե այլ (հիմնական) տնտեսական ընկերակցություն կամ ընկերություն, նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան՝ հնարավորություն ունի կանխորոշել նման ընկերության որոշումները:
գ/ եթե այլ (հիմնական) տնտեսական ընկերակցություն կամ ընկերություն, նրա կանոնադրական կապիտալում իր մասնակցության ուժով կամ նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան՝ հնարավորություն ունի կանխորոշել նման ընկերության որոշումները:
դ/ եթե այլ (հիմնական) տնտեսական ընկերակցություն կամ ընկերություն, նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով հնարավորություն ունի կանխորոշել նման ընկերության որոշումները:

6. Ինքնակամ կառույց է համարվում՝
ա/ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:
բ/ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:
գ/ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:
դ/ անավարտ կառույցը:

7. Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ
ա/ Անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ:
բ/ անվավեր գործարքն առոչինչ է,
գ/ վիճահարույց գործարքն անվավեր է դրա դադարման պահից,

դ/ անվավեր գործարքը չի առաջացնում որևէ իրավական հետևանք։

8. Գրավի իրավունքը դադարում է՝

ա/ գրավ դրված գույքը օրենքով սահմանված կարգով իրացվելու դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով.

բ/ բոլոր դեպքերում գրավատուի պահանջով.

գ/ բոլոր դեպքերում գրավ դրված գույքի ոչնչացմամբ.

դ/ ռեստիտուցիա կիրառելով։

9. Պահանջների հաշվանց չի թույլատրվում, եթե՝

ա/ դրանք վերաբերում են կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցմանը,

բ/ միայն մեկ կողմն է հայտարարեր հաշվանցի մասին,

գ/ պարտավորությունները հանդիպական են,

դ/ պարտավորության կողմերից մեկը դեմ է հաշվանցին։

10. Հետևյալ պնդումներից որն է ճիշտ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի վերաբերյալ՝

ա/ Անշարժ գույքի վաճառքի պայմանագրում, կողմերի գրավոր համաձայնեցված գնի մասին պայմանի բացակայության դեպքում, դրա վաճառքի պայմանագիրը համարվում է չկնքված։

բ/ Անշարժ գույքի վաճառքի պայմանագրում, կողմերի գրավոր համաձայնեցված գնի մասին պայմանի բացակայության դեպքում գինը որոշվում է ելնելով անշարժ գույքի շուկայական արժեքից։

գ/ Անշարժ գույքի վաճառքի պայմանագրում, կողմերի գրավոր համաձայնեցված գնի մասին պայմանի բացակայության դեպքում գինը որոշվում է անկախ գնահատողի կողմից։

դ/ Անշարժ գույքի վաճառքի պայմանագրում, կողմերի գրավոր համաձայնեցված գնի մասին պայմանի բացակայության դեպքում գինը որոշում է գնորդը։

11. Լիզինգատուի պահանջով լիզինգի պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել, եթե՝

ա/ լիզինգառուն խոչընդոտում է լիզինգատուին՝ իրականացնելու հսկողություն լիզինգի առարկայի նկատմամբ,

բ/ լիզինգառուն չի վճարում լիզինգային վճարի հերթական գումարը,

գ/ լիզինգառուն գույքը հանձնել է ենթալիզինգի,

դ/ լիզինգատուի պահանջով լիզինգի պայմանագիրը չի կարող լուծվել մինչև դրա ժամկետի ավարտը։

12. Անհատույց պահատվության դեպքում գույքի կորստի, պակասորդի կամ վնասվածքի հետևանքով պահատուին պատճառված վնասները հատուցվում են՝

ա/ գույքի վնասվածքի համար՝ դրա արժեքի նվազած մասի չափով,

բ/ գույքի վնասվածքի համար՝ դրա արժեքի նվազած մասի չափով, բայց ոչ ավել քան նվազագույն աշխատավարձի տասնապատիկը,

գ/ գույքի կորստի դեպքում՝ նոր գույքի արժեքի չափով,

դ/ չեն հատուցվում։

13. Ժամկետային ավանդի տարատեսակ են հանդիսանում՝

ա/ կուտակային կենսաթոշակային ավանդը և հոգուտ երրորդ անձի ավանդը,

բ/ կուտակային կենսաթոշակային ավանդը, ուսումնական ավանդը և ցպահանջ ավանդը,
գ/ կուտակային կենսաթոշակային ավանդը և ուսումնական ավանդը,
դ/ կուտակային կենսաթոշակային ավանդը, ուսումնական ավանդը, հոգուտ երրորդ անձի ավանդը և ցպահանջ ավանդը։

14. Օրինաչափ գործողություններով պատճառված վնասը հատուցվում է՝
ա/ օրենքով նախատեսված դեպքերում,
բ/ չի հատուցվում,
գ/ հատուցվում է միայն տուժողի համաձայնությամբ,
դ/ հատուցվում է միայն մեղքի առկայության դեպքում։

15. Որպես անհիմն հարստացում ենթակա չեն վերադարձման՝
ա/ խնայված գույքը,
բ/ դրամը և արժեթղթերը,
գ/ ի կատարումն պարտավորության տրված գույքը,
դ/ ի կատարումն գոյություն չունեցող պարտավորության տրված դրամական գումարները և այլ գույքը, եթե ձեռք բերողն ապացուցում է, որ գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը գիտեր պարտավորության բացակայության մասին կամ գույքը տրամադրել է բարեգործական նպատակներով։

16. Գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

ա/ օտարերկրացու կացության կարգավիճակն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու դեպքում.
բ/ եթե աշխատողը մինչև տասնվեց տարեկան է, և ծնողներից մեկը, որդեգրողը կամ հոգաբարձուն կամ խնամակալը, նրա առողջության նկատմամբ հսկողություն իրականացնող բժիշկը կամ տեսչական մարմինը պահանջում է աշխատանքային պայմանագրի լուծում.
գ/ աշխատողի և գործատուի համաձայնությամբ սահմանված փորձաշրջանի արդյունքներով.
դ/ տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում, եթե, այդ դեպքերով պայմանավորված, աշխատողը չի ներկայացել աշխատանքի։

17. Աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներից է՝
ա/ կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի կողմերի պատասխանատվությունը՝ ըստ իրենց պարտականությունների.
բ/ աշխատողների անհավասարությունը.
գ/ աշխատանքային պայմանագրի ժամկետային բնույթը.
դ/ օտարերկրյա իրավունքի կիրառումը։

18. Հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում միջին օրական աշխատավարձի չափը որոշվում է միջին ամսական աշխատավարձը բաժանելով՝

ա/ 20-ի.
բ/ 21-ի.
գ/ 22-ի.
դ/ 24-ի։

19. Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝

ա/ նախազգուշացում,
բ/ կրկնակի նկատողություն,
գ/ աշխատավարձից պահում,
դ/նկատողություն։

20. Աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ՝

ա/ աշխատանքային պայմանագրի լուծման օրը,
բ/ մինչև պայմանագրի լուծման պահը,
գ/ աշխատանքային պայմանագրի լուծման օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում,
դ/ գործատուի նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ։

21. Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝

ա/ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը.
բ/ փորձագիտական եզրակացություն տալու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը.
գ/ դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից.
դ/ վարչական ակտ ընդունելուց հետո դրա հիմքում դրված փաստական հանգամանքները կամ ակտի հասցեատիրոջ կարգավիճակը փոփոխվել են հօգուտ այն անձի, որը վարույթը վերսկսելու հարցով դիմում է ներկայացրել.

22. Վարչական ակտի փոփոխման կամ բեկանման հիմքերն են՝

ա/ վարչական բողոքը մերժելը.
բ/ վարչական վարույթը դրա իրավունքը չունեցող պաշտոնատար անձի կողմից իրականացված լինելը, նաև այն դեպքում, եթե դա իրականացրել է կոլեգիալ մարմինը, որի կազմում եղել է վարույթին մասնակցելու իրավունք չունեցող պաշտոնատար անձը.
գ/ վարչական վարույթի ժամկետի ավարտը.
դ/ վարչական ակտ ընդունելուց հետո դրա հիմքում դրված փաստական հանգամանքները կամ ակտի հասցեատիրոջ կարգավիճակը փոփոխվել են հօգուտ այն անձի, որը վարույթը վերսկսելու հարցով դիմում է ներկայացրել.

23. Պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝

ա/ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է.
բ/ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է.

գ/ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է.

դ/ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է:

24. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցը, որն ընկերության կանոնադրական կապիտալում իր ավանդն ամբողջությամբ չի ներդրել,

ա/ համապարտ պատասխանատվություն է կրում ընկերության պարտավորությունների համար՝ իր ավանդի վճարված մասի արժեքի սահմաններում.

բ/ սուբսիդիար համապարտ պատասխանատվություն է կրում ընկերության պարտավորությունների համար՝ իր ավանդի չվճարված մասի արժեքի սահմաններում.

գ/ որևէ պատասխանատվություն չի կրում.

դ/բոլոր պատասխանները սխալ են:

25. Պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝

ա/ 15-օրյա ժամկետում.

բ/ ժամկետային սահմանափակում առկա չէ.

գ/ մեկամսյա ժամկետում.

դ/ բոլոր պատասխանները սխալ են.

ԲԱԺԻՆ Բ. ԲՈԼՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՆ

Խնդիր 1. /10 միավոր/

2021 թվականի սեպտեմբերի 22-ին Արամյանը խանութ սրահում բաճկոն ընտրեց, վճարեց դրա գինը, իսկ վաճառողը դրամարկղային կտրոն տրամադրեց Արամյանին:

Մեկ ամիս օգտագործելով վերարկուն՝ Արամյանը նկատեց, որ բաճկոնը գունաթափվում է և վրան սկսում են հայտնվել ոչ բնորոշ գունավորումներ: Մտածելով, որ բաճկոնն անորակ կտորից է կարված, Արմայանը այն հանձնեց փորձաքննության: Փորձագետի եզրակացության համաձայն բաճկոնի պիտակի վրա գրված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, իրականում կտորը պարունակում է 30% բուրդ և ոչ թե 70%, ինչպես նշված էր պիտակում:

Արամյանը 2021 թվականի հոկտեմբերի 28-ին դիմեց վաճառողին, ներկայացնելով դրամարկղային կտրոնը, փորձագետի եզրակացությունը և գունաթափված բաճկոնը և ներկայացրեց հետևյալ պահանջները՝

- փոխարինել բաճկոնը համապատասխան որակի այլ բաճկոնով կամ
- վերադարձնել վճարված գումարը և միաժամանակ հատուցել վնասները:

Վաճառողը չառարկեց փորձագետի եզրակացության դեմ, սակայն հրաժարվեց կատարել Արամյանի պահանջը՝ ներկայացնելով հետևյալ հիմնավորումները՝

- Արամյանը չի ներկայացրել ապացույցներ, որ ապրանքը գնել է հենց իրենից,
- վաճառողը չի իմացել և չէր կարող իմանալ կտորի բաղադրության մասին,
- վաճառողը պատասխանատվություն չի կրում ապրանքի թերությունների կամ որակի համար
- Արամյանը իր պահանջները կարող է ներկայացնել արտադրողին,
- Ապրանքը վերադարձնելու համար օրենքով նախատեսված 14 օրվա ժամկետը վաղուց լրացել է, իսկ բաճկոնն այդ վիճակում այլևս վաճառել հնարավոր չէ:

Հարց 1. Ներկայացրեք կողմերի միջև առկա իրավահարաբերությունների բնույթը: Կողմերից ու՞մ փաստարկներն են իրավաչափ: Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը: /5 միավոր/

Հարց 2. Ներկայացրեք ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված առուծախի պայմանագրի հասկացությունը, էական պայմանները և վաճառողի կողմից ապրանքը գնորդին հանձնելու պահը որոշելու կանոնները /5 միավոր/

Խնդիր 2. /14 միավոր/

Սմբատյանը 2022 թվականի հունվարի 11-ին դատարան է դիմել ընդդեմ Աբելյանի՝ փոխառության գումարը և դրա վրա 2021 թվականի օգոստոսի 18-ից սկսած պայմանագրով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվեգրված տոկոսները բռնագանձելու պահանջի մասին:

Սմբատյանը ներկայացրել է հետևյալ փաստարկները՝

- 2021 օգոստոսի 18-ին իր և Աբելյանի միջև կնքվել է փոխառության պայմանագիր, որով Սմբատյանը երեք ամիս ժամկետով պարտավորվել է Աբելյանին պարտքով տրամադրել 2 000 000 դրամ գումար կահույք գնելու նպատակով, իսկ Աբելյանը պարտավորվել է երեք ամիս անց վերադարձնել գումարը և վճարել տոկոսներ՝ յուրաքանչյուր ամիս 22 տոկոսի չափով:
- Փոխառության գումարը Սմբատյանը Աբելյանին հանձնել է 2021 թվականի սեպտեմբերի 10-ին՝ ստացականի հիման վրա:

- Աբելյանը մինչև հայցադիմումի ներկայացման պահը չի վերադարձրել փոխառության գումարը և դրա վրա հաշվեգրված տոկոսները՝ ամսական 22 տոկոսի չափով:

Աբելյանը՝ առարկելով հայցի դեմ նշել է հետևյալ հակափաստարկները՝

- Չնայած ստացականում նշվել է 2 000 000 դրամ գումար, այնուամենայնիվ իրականում Սբատյանը Աբելյանին հանձնել է 500 000 դրամ գումար,
- Ստացականում 2 000 000 դրամ գումարը նշվել է, քանի որ Սբատյանը սպառնացել է, որ հակառակ դեպքում կվնասի Աբելյանին և նրա ընտանիքին,
- Սբատյանի սպառնալիքների մասին կարող են հիմնավորել գումարը ստանալու պահին իր հետ գտնվող երկու ընկերները,
- Տոկոսների հաշվարկը հակասում է օրենքին, իսկ փոխառության պայմանագիրը պետք է համարել չկնքված,
- Կողմերի միջև առկա է հաշվանցի հնարավորություն, քանի որ իր և Սմբատյանի միջև դեռևս 20.10.2015 թվականին կնքված առուծախի պայմանագրով Սմբատյանը չի վճարել վաճառված ապրանքի գնից 200 000 դրամը, որը պետք է վճարեր մինչև 30.12.2016 թվականը:

Հարց 1. Ներկայացրեք կողմերի միջյ առկա իրավահարաբերությունների բնույթը: Իրավաչափ են արդյո՞ք Աբելյանի հակափաստարկները: Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը: /9 միավոր/

Հարց 2. Ներկայացրեք փոխառուի կողմից փոխառության պայմանագիրը խախտելու հետյանքները, ինչպես նայ նպատակային յ պետական փոխառության պայմանագրերի հասկացությունները /5 միավոր/

Խնդիր 3. /12 միավոր/

Սիմոնյանը (այսուհետ՝ աշխատող) աշխատում էր «Տուր Սթոփ» ՍՊԸ-ում (այսուհետ՝ գործատու) որպես գանձապահ-խորհրդատու:

Գործատուն տուրիստական կազմակերպություն է և կազմակերպում է ներգնա ու արտագնա տուրեր:

Աշխատողի աշխատանքային պարտականությունն էր հաճախորդներին խորհրդատվություն տրամադրել առավել օպտիմալ փաթեթներ ընտրելու հարցում և գանձել վճարման ենթակա գումարները՝ դրանք մուտքագրելով դրամարկղ:

15.09.2021 թվականին գործատուի ներքին մոնիթորինգի և վերահսկողության բաժինը հերթական մոնիթորինգի ժամանակ բացահայտում է, որ Գործատուի կողմից վճարված հարկերն անհամեմատելի ավելին են, քան պետք է լինեին դրամարկղ մուտքագրված գումարների պարագայում:

Նման անհամապատասխանություններ են հայտաբերվում 2017 թվականից սկսած մինչև 2021 թվականի սեպտեմբեր 12-ը ներառյալ, և այդ ամբողջ ժամանակահատվածում գանձապահը եղել է Սիմոնյանը:

Սիմոնյանի կողմից ներկայացված հաշվետվությունների, տպված ՀԴՄ կտրոնների և հարկային մարմնին ներկայացված հաշվետվությունների համադրությունից պարզ է դառնում, որ Սիմոնյանը դրամարկղ է մուտքագրել գումարները ոչ ամբողջությամբ:

2017-2022 թվականների ընթացքում ընդհանուր առմամբ դրամարկղ չի մուտքագրվել 14 256 452 դրամ գումար:

Նշվածի մասին ներքին մոնիթորինգի և վերահսկողության բաժնի պետը 10.10.2021 թվականի զեկուցագիր է ներկայացնում Գործատուի տնօրենին:

Տնօրենը 11.10.2021 թվականին կադրերի բաժնի պետին հանձնարարում է հարուցել կարգապահական վարույթ:

Աշխատողը արձակուրդում է գտնվել 13.09.2021 թվականի մինչև 13.10.2021 թվականը, իսկ 14.10.2021 թվականից մինչև 20.10.2021 թվականը չվճարվող արձակուրդում:

Կադրերի բաժինը 12.10.2021 թվականին աշխատողին ուղարկում է դեպքի մասին գրավոր բացատրություն ներկայացնելու վերաբերյալ գրություն՝ բացատրություն ներկայացնելու համար սահմանելով 3 աշխատանքային օր ժամկետ:

Աշխատողը 14.10.2021 թվականին ստանալով գրությունը՝ որևէ ձևով չի արձագանքում դրան:

21.10.2021 թվականին Գործատուի տնօրենն ընդունում է աշխատողին աշխատանքից ազատելու մասին հրաման:

Աշխատողը վիճարկում է այդ հրամանը դատարանում՝ նշելով, որ ինքը որևէ խախտում թույլ չի տվել, կարգապահական վարույթի ամբողջ ընթացքում գտնվել է արձակուրդում, իսկ կարգապահական վարույթ չի կարող հարուցվել իր արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում, բացի այդ նշել է, որ չի ծանուցվել նախքան աշխատանքից ազատվելը, ինչպես նաև՝ վաղուց անցել են կարգապահական պատասխանատվության ենթարկելու ժամկետները և օրենքով չկա աշխատանքից ազատման նման հիմք:

Հարց 1. Ներկայացրեք կողմերի միջև առկա իրավահարաբերությունների բնույթը: Օրինական են արդյո՞ք գործատուի գործողությունները: Իրավաչափ են արդյո՞ք աշխատողի պնդումները: Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը: /8 միավոր/

Հարց 2. Թվարկեք գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը և լուծման համար արգելք հանդիսացող հանգամանքները: / 4 միավոր/

Խնդիր 4. /14 միավոր/

«Արտադրություն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) զբաղվում է պահածոների արտադրությամբ և արտահանմամբ:

Ընկերության բաժնետերերն են հանդիսանում Սիմոնյանը 25 % բաժնետոմսերով, Առաքելյանը՝ 18 % բաժնետոմսերով և Բագրատյանը՝ 57 % բաժնետոմսերով:

Բագրատյանը 14.10.2021 թվականին ծանուցում է Ընկերությանը և մյուս բաժնետերերին, որ ցանկանում է օտարել իրեն պատկանող ընդհանուր առմամբ 25 % բաժնետոմս՝ 12 000 000 ընդհանուր արժեքով:

Բաժնետերերը և Ընկերությունը որևէ ձևով չեն արձագանքում Բագրատյանի առաջարկին (կանոնադրությամբ սահմանված է 6 ամիս արձագանքի համար):

Բագրատյանը 20.02.2022 թվականին իր բաժնետոմսերից 10 %-ն օտարում է 2 000 000 դրամով:

14.03.2022 թվականին Բագրատյանը իր բաժնետոմսերից 12 %-ը նվիրում է իր որդուն, իսկ 13 %-ը փոխանակում է այլ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում «Կանկուր» ՍՊԸ-ին պատկանող 25 % բաժնեմասերի հետ:

Ընկերության բաժնետերեր Սիմոնյանը, Առաքելյանը, ինչպես նաև՝ Ընկերությունը 25.05.2022 թվականին իմանալով այդ գործարքների մասին՝ 01.06.2022 թվականին հայց են ներկայացնում դատարան այդ բոլոր գործարքներն անվավեր ճանաչելու պահանջով:

Հայցվորները ներկայացնում են հետևյալ հիմնական փաստարկները.

- Բագրատյանը պարտավոր էր մինչև բաժնետոմսերի օտարումը դրանք վաճառելու առաջարկություն ներկայացներ Ընկերության բաժնետերերին, իսկ առաջին ծանուցման պահից 6 ամիսը չի լրացել:
- Բաժնետերերի կողմից Բագրատյանի բաժնետոմսերը գնելուց հրաժարվելու դեպքում Բագրատյանը նույն առաջարկությունը պետք է ներկայացներ Ընկերությանը և միայն Ընկերության կողմից հրաժարվելուց հետո կարող էր իր բաժնետոմսերը վաճառել այլ անձի:

• Բագրատյանի և իր որդու միջև գործարքը կնքվել է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված շահագրգռվածությամբ գործարքների կնքման կանոնների խախտմամբ:

Բագրատյանը ներկայացնում է հետևյալ հակափաստարկները.

• Մինչև բաժնետոմսերն այլ անձանց օտարելը վերջինս պատշաճ ձևով առաջարկ է ներկայացրել բաժնետերերին և Ընկերությանը, սակայն պատասխան չի ստացել,

• Օտարվել են Բագրատյանին պատկանող ոչ բոլոր բաժնետոմսերը, որի պատճառով ինքը կարող էր ընդհանրապես չծանուցել Ընկերության բաժնետերերին և Ընկերությանը,

• Իր կողմից կնքված ոչ բոլոր գործարքների դեպքում բաժնետերերը կարող էին ունենալ գնման առաջնահերթություն:

Բագրատյանի և «Կանկուր» ՍՊԸ-ի միջև կնքված գործարքն անվավեր ճանաչելու պահանջ է ներկայացնում նաև «Կանկուր» ՍՊԸ-ի բաժնետեր Հովեյանը՝ պնդելով, որ այդ գործարքը «Կանկուր» ՍՊԸ-ի համար հանդիսացել է խոշոր գործարք և չի ստացել ընդհանուր ժողովի հավանությունը:

«Կանկուր» ՍՊԸ- տնօրենը առարկելով հայցի դեմ՝ նշել է, որ գործարքը ստացել է ընկերության տնօրենների խորհրդի հավանությունը, ինչը թույլատրված է ընկերության կանոնադրությամբ:

Հարց 1. Ներկայացրեք կողմերի միջյ առկա իրավահարաբերությունների բնույթը: Կողմերից ու՞մ փաստարկներն են իրավաչափ: Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը: /9 միավոր/

Հարց 2. Ներկայացրեք բաժնետիրական ընկերություններում շահագրգռվածությամբ յ խոշոր գործարքների կնքման կարգը, ինչպես նայ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում խոշոր գործարքների կնքման կարգը: /5 միավոր/